ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Կրտսեր դպրոցականի արժեհամակարգի զարգացումը մայրենիի դասերի ընթացքում

Կատարող՝ Մ. Գորգիսյանի անվան h. 158 հիմն. դպրոցի ուսուցիչ
Ա. Կարապետյան

Ղեկավար՝ Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ջ. Հ. Գյուլամիրյան

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն.....3

Գլուխ 1. Ազգային և համամարդկային արժեքների դրսևորումը տարբեր դասարանների դասագրքերի գրական նյութերում.....7

Գլուխ 2. Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառությունը ընթերցանության դասերին՝ որպես դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման միջոց

2.1.Ընկերասիրության, հոգատարության, փոխադարձ մարդկային հարաբերությունների ձևավորման դասեր.....12

2.2. Մայրենի լեզվին, մորը և հայրենիքին նվիրված ստեղծագործությունների ուսուցումը.....23

2.3. Հայ ժողովրդի ազգային խառնվածքի և համամարդկային գծերի բացահայտումը՝ որպես աշակերտների հոգեկերտվածքի ձևավորման միջոց.....25

Եզրակացություն.....28

Օգտագործված գրականության ցանկ.....31

Ներածություն

Մայրենի լեզվի դասավանդումը յուրահատուկ բնույթ ունի հատկապես տարրական դպրոցում: Հայերենի դասընթացը ոչ միայն բուն լեզվական, այլև ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոցն է, քանի դեռ սովորողները չեն անցնում առանձին մասնագիտական առարկաներ: Հետևաբար տարրական դասարանների ընթերցանության նյութերը սովորողների լեզվաքերականական գիտելիքների ու լեզվագործածության կարողությունների, լեզվական ու գրական ճաշակի զարգացման հետ միասին պետք է ապահովեն նաև բնության, մարդու և հասարակական կյանքի մասին տվյալ տարիքին ու կրթական մակարդակին համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերումը: Քանի որ տարրական դպրոցում դասարաններում մայրենի լեզուն արդեն ուսուցանվում է ինտեգրված ձևով՝ միասնաբար, մայրենիի դասընթացը աշակերտին հնարավորություն կտա ստանալու անհրաժեշտ գիտելիքներ գեղարվեստական գրականության, այդ թվում ժողովրդական բանահյուսության, գրական՝ արձակ ու չափածո բոլոր ժանրերի (հեքիաթ, հանելուկ, առակ, բանաստեղծություն, պատմվածք, վիպակ և այլն), ինչպես նաև հրապարակախոսական ու գիտահանրամատչելի գրականության տեսակների մասին (հոդված, ակնարկ, հաղորդում և այլն):

Անհրաժեշտ է առանձնահատուկ նշել, որ գրական երկերի ուսուցումը տարրական և միջին դպրոցում պետք է իրականացվի նոր սկզբունքով, նոր պահանջներին համապատասխան՝ գրական բնագրի ընտրությունը յուրաքանչյուր դասարանի համար կատարելով սովորողի տարիքային առանձնահատկություններին, արդեն ձեռք բերած գիտելիքների մակարդակին ու բառապաշարին համապատասխան: Մայրենի լեզվի ուսուցման բնագավառում կարևոր է ուսուցման *շարունակականության սկզբունքը*, որն ապահովում է լեզվական մակարդակների հետևողական ընտրությամբ, նախորդ դասարաններում անցած նյութի պարբերական կրկնությամբ, նոր նյութի հետ կապ ստեղծելով և բառապաշարի աստիճանական հարստացմամբ: Ընթերցանության նյութերի ծրագրային թեմաները (բնություն, ընտանիք, հասարակություն, հայրենիք և այլն) նույնպես խորացվում և ընդլայնվում

են դասարանից դասարան՝ սովորողների մտահորիզոնի լայնացմանն ու գիտելիքների խորացմանը զուգընթաց: Ըստ այդմ՝ հանձնարարելի է տարրական դասարաններ դասագրքերում ծրագրային թեմաները ներկայացնել համալիր եղանակով՝ մեկ ամբողջության մեջ ներառելով ընթերցանության նյութը, գրականագիտական տեղեկությունները, տեքստի վրա տարվող աշխատանքը, լեզվական գիտելիքների ուսուցումը և ճանաչողական ու դաստիարակչական խնդիրները:

Գրական երկերի դասավանդման, այս դեպքում ընթերցանության կազմակերպման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ գրական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը, անձի *արժեքային համակարգի* ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժշտ է սովորողներին հաղորդակից դարձել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային արժեքներին ու իդեալներին, ձգտումներին, գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործումով նրանց մեջ դաստիարակել մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկություններ. բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ:

Ուսուցիչն ինքը պետք է ունենա ազգային նկարագիր, ազգային արժանապատվություն, որպեսզի հստակ հասկանա իր գործի պատասխանատվությունը, ճիշտ գնահատի բարոյական արժեքներն ու չափանիշները և հասնի ազգային ոգու խթանմանն ու բարձրացմանը: Հատկապես ներկա պայմաններում անհրաժեշտ է, որ հայ երեխան լավ իմանա իր ժողովրդի պատմությունը, դաստիարակվի ազգային մեծերի կյանքի օրինակով և իր փոքրիկ ներդրումն ունենա մեր ինքնագիտակցության պահպանման գործում: Ուսումնական ամբողջ գործընթացը պետք է կազմակերպվի այնպես, որ ցանկացած առարկայի ուսուցում աշակերտներին *ազգային արժանապատվության* ոգով դաստիարակելու հնարավորություն ընձեռնի: Հարկավոր է նրան սովորեցնել՝ կյանքում օգտագործել ձեռք բերած գիտելիքները և կարողանալ գնահատել օրինակելին:

Սեպտեմբերի մեկին երեխան առաջին անգամ ոտք է դնում դպրոց: Հիմնականում այդ հիշարժան օրն է նա տեղեկանում, որ հայերեն տառերը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը, և ինքը՝ որպես հայ մարդ, պարտավոր է գրել ու կարդալ հայերեն: <<Այբբենարանի>> առաջին էջերից սկսվում է ծանոթացումը հայերենի՝ որպես մայրենի լեզվի հետ: Հանրահայտ է, որ կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների հարստացմանն ու նոր սերունդներին փոխանցմանը: Արդի փուլում կրթության շարունակականության, դրա զարգացման և 7բարեփոխումների գործընթացներն իրականցվում են բոլոր մակարդակներում, այդ թվում՝ նախադպրոցական կրթության ոլորտում: Հայաստանի Հանրապետության մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները: Նախադպրոցական կրթության ոլորտում ինչպես երեխաների զարգացման բոլոր ուղղություններով, այնպես էլ ազգային դաստիարակության առումով բարեփոխումները ոչ միայն անհրժեշտ են, այլև՝ անխուսափելի: Այս տեսանկյունից հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը, որոնք հարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել կրտսեր դպրոցականների հուզաշխարհի վրա:

Երեխան տարրական դպրոցում յուրացնում է այնպիսի կարողություններ ու հմտություններ, որոնք պետք են գալու նրան ամբողջ կյանքի ընթացքում:

Արդի ժամանակաշրջանում կրթության դաստիարակչական նպատակներն ուղղված են դեռահաս սերնդի մեջ որոշակի բարոյական գծերի, իդեալների, զգացմունքների և ազգային ու համամարդկային արժեքների որոշակի համակարգի ձևավորմանը: Մանկավարժական աշխատանքի ընթացքում ծագում են շրջադարձային այնպիսի հարցեր, որոնց լուծումը կարող է էապես փոխել երեխայի կյանքը: Դասվարը պատասխանատու է յուրաքանչյուր երեխայի ճակատագրի համար և պարտավոր է նրան դաստիարակել որպես հայ մարդ՝ հայրենի բնության, շրջապատի, հայրենիքի, մարդու, ազգային արժեքների՝ լեզվի, արվեստի, պատմության, ազգային խորհրդանիշ հանդիսացող պատմական, մշակութային դեմքերի ազգային-ազատագրական պայքարի նշանավոր ներկայացուցիչների հանդեպ ակնածանքով, պատմական հիշողության պահպանումով, այդ ամենի նկատմամբ սրտացավ ու

հոգատար վերաբերմունքով: ՀՀ-ում ընթացող կրթական բարեփոխումների գործընթացը կարևորում է արծարծված խնդիրները և նրանում անդրադարձ է կատարվել կրթության նորացվող բովանդակության հենց այդ տեսանկյունից:[1] Արդեն գործածության մեջ դրված *առարկայական չափորոշիչները* պահանջում են դաստիարակելու այնպիսի սերունդ, որը, տիրապետելով գիտելիքների որոշակի պաշարի, ունենալու է ազգային նկարագիր, կարողություններ ու հմտություններ՝ կյանքում դրսևորելու համար:

Ներկայացված ավարտական աշխատանքում արծարծված են տարրական դպրոցում իրականացվող կրթական բարեփոխումների, չափորոշիչների հետապնդած նպատակներից մեկի՝ մայրենի լեզվի ուսուցման ընթացքում, հենվելով համապատասխան բնագրային նյութերի ընձեռած թեմատիկ-բովանդակային հնարավորությունների վրա, աշակերտների արժեքային համակրգի ձևավորման հարցերը:

1. [1] <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես 1-2.2008

Գլուխ 1

Ազգային և համամարդկային արժեքների դրսևորումը տարբեր դասարանների դասագրքերի գրական նյութերում

Ազգային արժեքները չառանձնացնելով համամարդկայինից՝ ուսուցիչն, այնուամենայնիվ, ուսուցման ընթացքում չի կարող ընդգծել միայն հայ մարդուն և հայոց հողին բնորոշ շատ արժեքներ, որոնց շնորհիվ պահպանվում են հայ մարդու դիմագիծն ու ազգային պատկանելությունը: Կան միայն հայկական խորհրդանիշներ, որոնց կրողն ու շարունակողը հայ երեխան պիտի լինի: Այդ խորհրդանիշները պիտի որոնել և՛ հայոց լեռների ու ջրերի, և՛ ավանդույթների ու ծեսերի, և՛ քարի ու քարեղեն մարմնացումների, և՛ հողի ու ծառի, և՛ այն մարդկային որակների մեջ, ովքեր իրենց անվամբ և ազգանվամբ ազգային երևույթներ են՝ Մեսրոպ Մաշտոց ու Վարդան Մամիկոնյան, Կոմիտաս ու Անդրանիկ, Վիկտոր Համբարձումյան ու Ալեքսանդր Թամանյան, Գր. Նարեկացի ու Ե. Չարենց…

Հայ դպրոցականը մայրենիի ուսուցման ընթացքում դասեր պիտի քաղի հայոց մեծերի՝ մեր ազգային խորհրդանիշներ կազմող պատմական ու գրական անհատների նկատմաբ ցուցաբերած խոնարհումի ու երկյուղածության դրսևորումներից: Այդ բոլորը միասին կոչվում են հայոց աշխարհ, հայրենիք, հայ մարդ, հայ արժեք, և դրանց պաշտամունքն ունենալն է հայ մարդուն հայ պահում ամենուր, Նարեկացու ոգին և Լուսավորչի կանթեղն են լուսավորելու հայ երեխայի, հայ երիտասարդի կյանքի ուղին:

Արժեքային համակարգ են ձևավորում մեր պատմական հուշակոթողները: Գառնին ու Գեղարդը, Նորավանքն ու Գանձասարը, Սարդարապատի հուշահամալիրն ու Թաթևի վանքը, Նոր Ջուղայի հոյաշեն եկեղեցիներն ու Աղթամարա վանքը…

Արժեքներ, որոնց գոյությունն իսկ օգնում է ուծացումից փրկել հատկապես հայ երիտասարդներին: Սա պարտավորեցնող պահանջ է, մեր մեծերի հոգևոր կտակի պահանջներից մեկը:

Հայոց խորհրդանիշներն են սոսին ու ծիրանին, հավերժության, Աստծո հետ հաղորդակցվելու, հայրենի հողի, բերրիության, տոկունության ու համի խորհրդանիշներ: Այս խնդիրներն են աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին, պատրաստվածության և գիտելիքների յուրացման

մակարդակին համապատասխան, առաջադրվում տարրական դպրոցին: Այս դասարաններում կարևորվում են կարդալու ընթացքում աշակերտների բարոյակամային հատկանիշների, բարոյական-գեղարվեստական արժեքների ձևավորումը, ստեղծագործության հերոսների վարքագծի նկատմամբ վերաբերմունքի դրսևորումը, բարեկամության, ճշմարտության, բարության, ազնվության և այլ բարոյական արժեքների ճանաչումն ու գնահատումը: Դասարան առ դասարան ընդլայնվում է այս խնդիրների շրջանակը: Առաջադրվում են նոր պահանջներ՝ ազգային արժանապատվության դրսևորում, գրքի և գրականության հանդեպ հայ ժողովրդի՝ դարեր ի վեր ցուցաբերած հետաքրքրության ու պաշտամունքի ճանաչում և այդ բնորոշ գծի խորացում, մայրենի լեզվի տարածում, հայոց խորհրդանիշների հանդեպ ակնածանք և խոնարհում:

Այս գաղափարները մարմնավորում են ստանում ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառությամբ: Ընթերցանության նյութերը տարբեր դասարաններում այնպես են ընտրված, որ նպաստում են որևէ գաղափարի զարգացմանը, պարունակում են այնպիսի տարբեր արժեքներ, որոնք համադրելով և ուսուցանելով կազմում են արժեքային այն համակարգը, որն այնքան խիստ անհրաժեշտ է մեր նորանկախ հանրապետության այսօրվա սերնդին: Որքան էլ այդ ստեղծագործություններն ամբողջովին տարանջատված չեն միմյանցից, այնուամենայնիվ,որևէ գերակա գաղափարով առանձնանում են միմյանցից: Այդ առումով դասակարգելով տարրական դասարանների մայրենիի դասագրքերի ընթերցանության նյութերի թեմատիկ և բովանդակային ընդգրկումները՝ ստացել ենք այսպիսի պատկեր.

1. **Հայրենիք, հայրենասիրություն, հերոսություն, քաջություն**

ՄԱՅՐԵՆԻ 2 (Անժել Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան)-<<Ծիծեռնակն ու ծիտիկը>> (Պ.Խաչատրյան), <<Երգ հայրենիքի մասին>> (Ս.Կապուտիկյան),

ՄԱՐԵՆԻ 3 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)- <<Հայրենիք>> (Ս.Մուրադյան), <<Սիզախոտի երազը>> (Ա.Պարսամյան), <<Հայրենիք>> (Պ.Խաչատրյան), <<Քո տունը>>(Լ.Սարգսյան), <<Տիգրանն Ավարայրում>> (Ե.Պետրոսյան), <<Սասունցի Դավիթ>> (Հովհ.Թումանյան), <<Լսի՛ր զինվորին>> (Ն.Միքայելյան), <<Նամակ>>

(Պ.Խաչատրյան), <<Հայաստան>>(Է.Միլիտոնյան), <<Այծեմնիկը>> (Ա.Ղանալանյան), <<Քաջ Վարդանը>>,

ՄԱՅՐԵՆԻ 4 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)- <<Մայր Հայաստան>> (Ն.Միքայելյան), <<Հայաստան>> (Պ.Խաչատրյան),

2. **Մայրենի լեզու, հավատ, սեր գրի և գրականության նկատմամբ**

ՄԱՅՐԵՆԻ 2 (Անժել Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան)-<<Իմ հա՛յ լեզու>> (Ս.Կապուտիկյան), <<Մեսրոպ Մաշտոցին>> (Խ.Դաշտենց), <<Ազգային տոն>> (Ս.Լիսիցյան),

ՄԱՐԵՆԻ 3 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)- <<Հայոց լեզու>> (Պ.Խաչատրյան), <<Կարդա՛>> (Ալ.Ծատուրյան),

ՄԱՅՐԵՆԻ 4 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)-<<Ազգային երգը>> (Ավ.Իսահակյան), <<Մայրենի լեզու>> (Ս.Մուրադյան), <<Մեսրպյան տառեր>> (Ս.Մկրտչյան),

3. Մայր, ծնողապաշտություն, կապը արմատների հետ, հիշողություն

ՄԱՅՐԵՆԻ 2 (Անժել Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան)-<<Իմ դասագրքերը>> (Ս.Մուրադյան), <<Հայրս դաշտից տուն եկավ>> (Պ.Խաչատրյան), <<Բարի լու՛յս, մայրի՛կ>> (Խ.Գյուլնազյան), <<Երգ մայրիկիս>> (Ն.Միքայելյան), <<Մայրիկի հաշիվը>> (Փ.Աթրե), <<Իմ հերոս պապը>> (Պ.Խաչատրյան), <<Մեր տան մեջ>> (Ս.Կապուտիկյան),

ՄԱՅՐԵՆԻ 3 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)-<<Հայրենիքն ու մայրկը>> (Մ.Կորյուն), <<Հոր նամակը>> (Է. դե Ամեչիս), <<Մայրիկիս տոնը>> (Գ.Վարդանյան), <<Բարդի>> (Ս.Բուլաթյան),

ՄԱՅՐԵՆԻ 4 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)-<<Ու՞մ նվրրեմ իմ փոքրիկ սիրտը>> (Ն.Էբրահիմի), <<Հայրս>> (Հովհ.Շիրազ), <<Մոր ժպիտը>> (Դ.Ուկլեբա-Գրիգորյան), <<Մոր նամակը>> (Է.դե Ամիչիս),

4. **Ազնվություն, վեհանձնություն, հպարտություն**

ՄԱՅՐԵՆԻ 2 (Անժել Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան)-<<Լորերի ընտանիքը>> (Լ.Սարգսյան), <<Մանուկ Դավիթը>>, <<Փոքրիկ թոռնիկիս>> (Ե.Պետրոսյան), *ՄԱՅՐԵՆԻ 4 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)*-<<Տղայիս>> (Ս.Կապուտիկյան), <<Սասունցի Դավիթ>> (Մ.Խերանյան),

5.Մարդասիրություն, բարություն

ՄԱՅՐԵՆԻ 2 (Անժել Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան)-<<Հրաշալի բառը>> (Վ.Օսեևա), <<Եղևնին>> (Հ.Վարդանյան), <<Գզգզված ճնճղուկը>> (Կ.Պաուստովսկի), <<Շունը աչքերով էր խոսում>> (Գ.Մովսիսյան), <<Մարտի 8-ին>> (Ա.Պարսամյան), <<Արծիվն ու հովիվը>> (Ս.Ալաջաջյան),

ՄԱՅՐԵՆԻ 3 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)-<<Ճամփորդները>> (Եզոպոս), <<Առյուծն ու մուկը>> (Վ.Այգեկցի), <<Որսորդի սիրտը>> (Վ.Անանյան), <<Էս մի բուռն էլ թռչուններին>> (Հ.Մաթևոսյան),

ՄԱՅՐԵՆԻ 4 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)-<<Շնիկը>>,

6. Ընկերասիրություն, մարդկային փոխհարաբերություններ

ՄԱՅՐԵՆԻ 2 (Անժել Քյուրքչյան, Լիլիթ Տեր-Գրիգորյան)-<<Կես խնձոր>> (Լ.Շանթ), <<Աշնան կիրակի օր>> (Ռ.Շառոյան), <<Պարսատիկը>>(Լ.Բառնակյան), <<Պայման>> (Յ.Սահակյան), <<Բեմբին>> (Ֆ.Զալթեն),

ՄԱՅՐԵՆԻ 3 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)-<<Հիվանդ դդմի , կաղամբի և բժշկի մասին>> (Յ.Սահակյան),

ՄԱՅՐԵՆԻ 4 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)-<<Լավ ընկերը>>,

7. Աշխատասիրություն, համերաշխություն

ՄԱՅՐԵՆԻ 3 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)-<<Յոթ փայլուն աստղերը>>, <<Ուժի ակունքը>> (Գ.Գաբրիելյան), <<Մայրին>>(Լ. Դա Վինչի), <<Կարապը, խեցգետինը և գայլաձուկը>> (Ի.Կռիլով),

ՄԱՅՐԵՆԻ 4 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)-<<Թագավորն ու հողագործը>> (Ս.Մկրտչյան), <<Պապը>>(Հ.Սահյան), <<Ձեռքերը>> (Ա.Դարբնի),

8.Պատմական հուշակոթողներ

ՄԱՅՐԵՆԻ 4 (Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան)-<<Մատենադարան>>, <<Խաչքար>> (Վ.Դավթյան), <<Օշականյան հյուրընկալություն>>

Տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում տեղ են գտել նաև հայրենի բնությանը, կենդանական աշխարհին, մեր հայրենիքի հավերժության, փառքի խորհրդանիշներ Արարատ և Արագած լեռներին, մայր Արաքսին, Սևանա լճին, քաղաքամայր Երևանին նվիրված գրական փոքրիկ ստեղծագործություններ:

Նրանցից յուրաքանչյուրի ուսուցումը երեխաների հոգում պետք է արթնացնի գեղեցիկ և վեհ զգացումներ, մտորումների տեղիք տա կյանքի, հավերժության խորհրդի, բնության և մարդու ներդաշնակ կապի, հայրենի երկրի պատմության և այդ պատմությունը կերտող ժողովրդի մասին: Ստացած գիտելիքները երեխաներին մղում են դրսևորելու իրենց որպես այդ ամենի հանդեպ պատասխանատվություն կրող անհատներ: Հոգատարություն, սրտացավություն, երկյուղածություն, ուշադրություն,- ահա ոչ լրիվ թվարկումն այն մարդկային վերաբերմունքի, որ պետք է ունենա յուրաքանչյուր՝ հայրենիքը, նրա անսպառ գանձերն ու հերոսական պատմությունը սիրող մարդ:

Բարոյական անսպառ արժեքներ են իրենց մեջ պարունակում նաև ժողովրդական իմաստություններ արտահայտող փոքրածավալ երկերը՝ առակներ, առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, խրատներ, որոնցով հարուստ են բոլոր դասագրքերը:

Գլուխ 2

Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառությունը ընթերցանության դասերին՝ որպես դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման միջոց

2.1. Ընկերասիրության, հոգատարության, փոխադարձ մարդկային հարաբերությունների ձևավորման դասեր

Գրական նյութերում արտահայտված գաղափարները, նրանցում տեղ գտած բարոյական և գեղագիտական արժեքների դրսևորումները, պատկերավորման և արտահայտչական միջոցները աշակերտներին հասկանալի դարձնելու, նրանց գիտելիքներ հաղորդելու և այդ արժեքներով դաստիարակելու համար անհրաժեշտ է ուսուցումը կազմակերպել մեթոդիկայի՝ քննություն բռնած արդիական եղանակներով և հնարներով: Օգտագործելով ավանդական մանկավարժության առաջադեմ մեթոդները՝ ուսուցիչը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ ժամանակակից ուսուցումը հենվում է աշակերտակենտրոն սկզբունքի վրա: Դա նշանակում է, որ ուսուցիչը դադարում է ուսուցման կենտրոնական դեմք լինելուց. աշակերտներն իրենք են կենտրոնական դերում, խթանվում է նրանց ինքնուրույն-որոնողական գործունեությունը: Այդ գործունեությունը կազմակերպվում է աշակերտների և՛ անհատական, և՛ խմբային, և՛ զույգերով աշխատանքային ձևերով: Դասը ստեղծագործական գործընթաց է և հաճախ ընթացքում է որոշվում, թե ինչ մեթոդական եղանակ և հնար է անհրաժեշտ առաջադրված նպատակի իրականացման համար:[2]

Անդրադառնանք աշակերտների արժեքային համակարգի ձևավորման գործընթացի իրականացմանը նպատակաուղղված մի քանի մեթոդների, որոնք մենք կիրառել եմ մանակավարժական գործունեության ընթացքում:

Ուսուցման ժամանակակից մեթոդներ՝ ԽԻԿ համակարգ-ԽԻԿ-ը ժամանակակից ուսուցման մեթոդների համակարգ է, որը ուսուցման գործընթացը բաժանում է

2. [2] Ա. Տեր-Գրիգորյան <<Հայոց լեզվի մեթոդիկա>>, Երևան 1980թ.

հետևյալ փուլերի՝ *խթանում, իմաստի ընկալում, կշռադատում*:

Բնութագրելով յուրաքանչյուր փուլում ուսուցչի անելիքը՝ ԽԻԿ-ը նաև առաջ է քաշում մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքին հասնելու համար:

Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝

- նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները
- քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել աշակերտներին
- աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում
- մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի խթանման փուլում՝ մտագրոհ, խմբավորում, պրիզմա, մտածիր-զույգ, կազմիր-քննարկիր, ձնագնդի, հինգ րոպեանոց ազատ շարադրանք:

Իմաստի ընկալման փուլի նպատակներից են՝

- սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը
- տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը
- նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը
- մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում՝ T-աձև աղյուսակ, գաղափարների քարտեզ, Վենի դիագրամ, փոխգործուն նշանների համակարգ, խորանարդում, խճանկար, երեք բանալի և մեկ կողպեք, շրջագայություն պատկերասրահում:

Կշռադատման փուլի նպատակներից են՝

- սովորողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով
- նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում
- մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի կշռադատման փուլում՝ քառաբաժան,խորանարդում:

Օրինակ ներկայացնենք, թե Մայրենի 4(Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան) դասագրքում ընդգրկված <<Մատենադարան>> դասանյութը ըստ ուսուցման ժամանակակից մեթոդների ինչպես կուսուցանվի.

Խթանման փուլ

Մտագրոհի միջոցով բացահայտել աշակերտների մտքում Մատենադարան բառի առաջացած զուգորդումները:

Պարզել, թե աշակերտներն ինչ գիտեն Մատենադարանի մասին, և նրանց նախապատրաստել տեքստի ընթերցմանը:

Իմաստի ընկալման փուլ

Մատենադարանի մասին նյութի ընթերցում՝ *փոխգործուն նշանների համակարգի* կիրառումով:

Բնագրային աշխատանք.

- սովորեցնել *մագաղաթ, ծաղկող, գրապահոց, գրադարան, ձեռագրատուն* բառերը
- սովորեցնել *գրիչ, մատյան, ձեռագիր, տուն,* բազմիմաստ բառերի իմաստները
- սարզել *կյանքի գնով* բառակապակցության իմաստը

Կշռադատման փուլ

Աշակերտները պետք է՝

- փորձեն բացատրել, թե ինչու են մատենադարանի մուտքի առջև կանգնեցված մշակույթի և գիտության այդ գործիչների արձանները
- մեկնաբանեն իմաստախոսությունը, կարծիք հայտնեն գրքի մասին
- գնահատեն մարդկանց վերաբերմունքը գրքի նկատմամբ անցյալում և ներկայում, ինչպես նաև գրադարանի դերը մարդու կյանքում:

Կիրառվող մեթոդների տեղին օգտագործելով է պայմանավորված այս կամ այն բարոյական և գեղագիտական արժեքի ընկալումն ու գնահատումը դեռահաս տարիքի երեխաների կողմից: Երեխայի հոգեկերտվածքի ձևավորումը և հարստացումն այնպիսի արժեքներով, ինչպիսիք են մարդասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը և ուշադրությունը մարդու և շրջապատի հանդեպ, կախված են ուսուցանվող նյութի բովանդակությունից, գրական հերոսների արարքների գնահատումից, նրանց բնավորության գծերից, կեցվածքից և վարվելակերպից: Իսկ

այս ամենը բացահայտելու համար նախընտրելի է այնպիսի մեթոդի կիրառումը, որ կոչվում է *պատումի ուրվագծում*:

Պատումի ուրվագծի աղյուսակ - Պատումի ուրվագծի աղյուսակը կիրառվում է գլխավորապես դեպքերով հարուստ արձակ ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, թեև կարող է հաջողությամբ օգտագործել նաև որոշ չափածո ստեղծագործություններ ուսումնասիրելիս: Սա բավական պարզ կառուցվածք ունեցող աղյուսակ է, որն աշակերտներին օգնում է տեսանելի ձևով ներկայացնելու պատումի դիպաշարի(սյուժեի) հիմնական գծերը, հերոսներին և նրանց գործողությունները: Այս մեթոդի կիրառումն օգտակար է իմաստի ընկալման փուլում:

Ուսումնասիրվող նյութը <<Լավ ընկերը>> աստվածաշնչյան պատումն է:

Աշակերտներին առաջարկվում է գծել այսպիսի աղյուսակ.

Հերոսը	Ե՞րբ	Ի՞նչ էր անում կամ ի՞նչ պատահեց նրան	Ի՞նչ էր զգում

Այնուհետև սկսում են հատված առ հատված ընթերցել ստեղծագործությունը և դադարների ընթացքում լրացնել աղյուսակը: Այս աշխատանքը սովորաբար կատարվում է անհատապես, սակայն կարող է կատարվել նաև զույգերով: Առաջին երրորդ սյունակների հարցերի պատասխանները աշակերտները դուրս են գրում պատումից: Երկրորդ և չորրորդ սյունակների հարցերի պատասխանները կարող են երբեմն ուղղակիորեն գտնել ստեղծագործության մեջ, երբեմն պարզապես գուշակել կամ ենթադրել: Հնարավոր է, որ առանձին դեպքերում երկրորդ կամ չորրորդ սյունակները աշակերտները չլրացնեն. Դրանք պարզապես բաց կմնան:

Հարցերի պատասխանները քննարկելուց և նախընտրելի տարբերակներն ընտրելուց հետո <<Լավ ընկերը>> աստվածաշնչյան պատումի ուրվագծի աղյուսակն այսպիսի տեսք կարող է ունենալ.

Հերոսը	Ե՞րբ	Ի՞նչ էր անում կամ ի՞նչ պատահեց նրան	Ի՞նչ էր զգում
Միայնակ ճամփորդ	Մի անգամ	Ճամփորդում էր	Հոգնած էր, անհանգիստ
Ավազակներ	Հարմար պահի	Հարձակվեցին, ծեծեցին, կողոպտեցին, փախան	Ուրախ էին
Միայնակ ճամփորդ	Վիրավոր ընկած ժամանակ	Օգնության կանչ էր կանչում	Թուլություն, ցավ, վիրավորանք ափսոսանք էր զգում
Լավ հագնված անցորդ	Նույն ճանապարհով անցնելիս	Լսեց վիրավորի օգնության կանչը, տեսավ նրան, ձևացրեց, թե չի տեսել, հեռացավ	Մտահոգվեց իր շքեղ հագուստի համար
Միայնակ ճամփորդ	Լավ հագնված անցորդի գնալուց հետո	Մտածեց, որ կմեռնի	Հուսահատ էր
Երկրորդ անցորդ	Նույն ճանապարհով անցնելիս	Լսեց վիրավորի կանչը, ուշանում էր, ձևացրեց, թե չի լսել, շտապ հեռցավ	Վախենում էր ուշանալուց
Միայնակ ճամփորդ	Երկրորդ անցորդի գնալուց հետո	Մտածեց, որ կմեռնի	Հուսահատ էր

Աշխատանքն ավարտելուց հետո աշակերտների կազմած աղյուսակները համեմատվում են, այսինքն՝ ստուգվում է, թե նրանք ինչպես են լրացրել աղյուսակը, բացթողումներ ունե՞ն, թե՞ ոչ: Սխալները տեղում ուղղվում են, բացթողումները՝ լրացվում: Այս աշխատանքը նպաստում է ուշադրության զարգացմանը, բնագիրը վերլուծաբար կարդալու, բացահայտ և ոչ բացահայտ տեղեկությունները դուրս բերելու, ընդհանրացումներ կատարելու հմտությունների զարգացմանը: Եթե ստեղծագործությունը դասագրքում ներկայացված է առանձին մասերով, ապա աղյուսակն առաջին մասի հիման վրա լրացնելուց հետո թերթիկը պահում են, որպեսզի երկրորդ մասի համար լրացված աղյուսակին միացնելով՝ ստանան պատումի ամբողջական ուրվագիծը:

Այս օրինակում մարդու նկատմամբ վերաբերմունքը շատ կարևոր է. Հարգել, օգնել մարդուն վտանգի պահին, հույս տալ, եթե հուսահատ է:

Աշակերտը պետք է՝

- գնահատի գործող անձանց բնորոշ հատկանիշները (անտարբերություն, եսասիրություն, ազնվություն) և վերաբերմունք դրսևորի դրանց նկատմամբ
- կարևորի մարդասիրությունը, ազնվությունը, սրտացավությունը, ուրիշին օգնելու ձգտումը, ձգտի ազնիվ ու մարդկային լինել իր արարքների մեջ
- մերժի բացասական հատկանիշները, կարևորի դրական գծերը, սովորի գործնականում դրսևորել դրական հատկանիշները:

Այս մեթոդը կարելի է կիրառել նաև <<Շնիկը>>, Էդ դե Ամիչիսի <<Փոքրիկ հայրենասերը>>. Վ. Նալբանդյանի <<Կամակոր Նոյը>> պատմվածքները, <<Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք>>, <<Թափառական երաժիշտները>>, Ա. Պարսամյանի <<Հրաշք վրձինը>>, Զ. Խալափյանի <<Ծաղկուն պարտեզը>>, Ս. Մկրտչյանի <<Թագավորն ու հողագործը>> հեքիաթները, <<Սեխի թուփն ու ընկուզենին>>, <<Առյուծը, գայլը և աղվեսը>> առակները, Գ. Գաբրիելյանի <<Տխրություն>> բանաստեղծությունը ուսուցանելու ընթացքում:

Հերոսներին բնութագրող աղյուսակ- Ուսուցիչը նախապես մասերի է բաժանում բնագիրը և ստեղծում է հերոսներին բնութագրող աղյուսակ, որի առաջին սյունակում նշում է այն հատկանիշները, որոնցով առանձնացված հատվածներից յուրաքանչյուրում կարող է բնութագրվել հերոսը: Հնարավոր է, որ հերոսը

ստեղծագործության միևնույն հատվածում բնութագրվի տարբեր հատկանիշներով, որոնք պետք է նշվեն տարբեր տողերում:

Աշակերտները կարդում են բնագիրը հատված առ հատված և աղյուսակում տրվածներից ընտրում տվյալ հատվածում հերոսին բնութագրող բառն ու նրա կողքի սյունակում գրում հատվածի համարը: Այնուհետև աղյուսակի վերջին սյունակում գրում են այն արտահայտությունը կամ նախադասությունը, որով հիմանվորվում է այդ կարծիքը: Աշխատանքը կատարվում է անհատապես կամ զույգերով: Այնուհետև գրառումները քննարկվում են դասարանում: Այս աշխատանքն առաջին անգամ կարելի է կատարել ամբողջ դասարանով, ուսուցչի անմիջական ղեկավարությամբ և ուղղորդմամբ՝ այդ կերպ աշակերտներին նախապատրաստելով հետագայում աղյուսակը ինքնուրույնաբար կամ զույգերով լրացնելուն:[3]

Ահա մեկ օրինակ: <<Շնիկը>> պատմվածքը կարելի է բաժանել 6 հատվածների՝

Նա ծնվեց մի նեղ ու կեղտոտ փողոցի անկյունում նախադասությունից մինչև *Արևը ծագելուն պես ամեն ինչ սկսվում էր նորից* նախադասությունը:

Մի օր էլ շնիկն իր ծանոթ մայթեզրին տարօրինակ, բայց իր համար գեղեցիկ մի բան տեսավ նախադասությունից մինչև *Ծաղկավաճառը նայեց նրա ականջներին ու ժպտաց* նախադասությունը:

Ի՜նչ գեղեցիկ է կյանքը….. նախադասությունից մինչև *Շնիկը դանդաղ մոտեցավ նախադասությունը:*

Բարև՛ շնի՛կ…. նախադասությունից մինչև *Առաջ ամեն ինչ մռայլ էր ու տխուր, մարդիկ ինձ չէին սիրում, իսկ հիմա ուրիշ է* նախադասությունը:

Երաժիշտը լսեց նրան և ապա ասաց… նախադասությունից մինչև *Դե ինչ, վերցրու՛ ակնոցդ…* նախադասությունը:

Վերջին հատվածը:

Շնիկ	Հատվածի համարը	Կարծիքը հիմնավորող նախադասություն կամ արտահայտություն
Խեղճ, անօգնական	1	Ոչ մեկը չէր օգնում կամ ուտելու բան տալիս:

[3] Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան <<Մայրենի 4>>(Մեթոդական ուղեցույց), Երևան 2009թ.

Ուրախ	3	-Ի՜նչ գեղեցիկ է կյանքը,- ուրախացավ շնիկն ու… …
Մերժող	4	Ներեցե՛ք, բայց չեմ կարող…
Զարմացած	2	Ի՜նչ տարօրինակ է…
Երջանիկ	6	Այդ օրվանից շնիկը տխուր չէր, ապրում էր երջանիկ…
Հասկացող	5	Դե ինչ, վերցրու՛ ակնոցդ…
Բարեկիրթ	4	Ներեցեք
Երաժիշտ		
Բարի, ընկերասեր	5	…եթե դու մենակ ես ու տխուր, արի ընկերանանք
Ուրախ	4	Ուրեմն դու՞ ես գտել իմ ակնոցը,- ասաց երաժիշտը և ուրախ ավելացրեց…
Խոստումը կատարող	6	Ե՛կ, բարեկա՛մս, գնա՛նք, տանը մեզ են սպասում:

Այս պատմվածքից երեխաների մեջ պետք է ձևավորվեն արժեքային համակարգի հետևյալ գծերը.

- ընկերասիրություն
- սեր կյանքի նկատմամբ
- խնամք, հոգատարություն կենդանիների նկատմամբ
- պատասխանատվություն նրա նկատմամբ, ում դու խնամում և ընտելացրել ես:

Կարելի է կիրառել <<Լավ ընկերը>>, Վ. Նալբանդյանի <<Կամակոր Նոյը>>, Լ. դա Վինչիի <<Դեղձենին>>, Մ. Կորյունի <<Սեխի թուփն ու ընկուզենին>>, Վ. Այգեկցու <<Առյուծը, գայլը և աղվեսը>>, Զ. Խալափյանի <<Ծաղկուն պարտեզ>> ստեղծագործություններն ուսումնասիրելիս:

Աշակերտների արժեքային համակարգի ձևավորմանը կարող է նպաստել նաև **կրկնակի գրառումներով օրագրի** կիրառումը- Կրկնակի գրառումներով օրագիրը

ընթերցանության ժամերին կիրառվող բավական արդյունավետ մեթոդ է, որը հնարավորություն է տալիս բնագիրն ընկալելու սեփական զգացողությունների և փորձառության միջոցով: Աշակերտներն ընթերցելուն զուգահեռ գրառում են բնագրի այս կամ այն հատվածի ընթերցման ժամանակ ծագած մտքերը, զգացումներն ու հարցադրումները, արձագանքում են կարդացածին, կապեր են ստեղծում տվյալ բնագրում և այլ ստեղծագործություններում իրենց կարդացածի միջև և այլն: Այս մեթոդը նպատակահարմար է կիրառել ինչպես իմաստի ընկալման, այնպես էլ կշռադատման փուլում: Կրկնակի գրառումներով օրագիր ստեղծելու համար անհրաժեշտ է ուղղահայաց գծով երկու մասի բաժանել սպիտակ թուղթը: Աշակերտները հատվածաբար կարդում են գրական ստեղծագործությունը և տետրի առանձնացված երկու մասերում գրառումներ անում: Թղթի ձախ կողմում աշակերտները գրի են առնում տվյալ հատվածում իրենց ուշադրությունը գրաված, հետաքրքրած, իրենց վրա տպավորություն գործած կամ կարևոր թվացող նախադասությունը, արտահայտությունը, բառը, միտքը, դրվագը կամ կերպարի նկարագրությունը: Ընդ որում աշակերտները կարող են դրանք բառացիորեն մեջբերել հատվածից, ներկայացնել սեփական բառերով՝ վերաշարադրել կամ ամփոփ ներկայացնել հետաքրքրական մտքերն ու դրվագները:[4]

Այսպես կապ է ստեղծվում կարդացած ստեղծագործության և սեփական կենսափորձի միջև. կարդացածն էլ աշակերտների համար ավելի տպավորիչ և հասկանիալի է դառնում: Աջ կողմում աշակերտները պետք է իրենց գրառումների վերաբերյալ մեկնաբանություն գրեն. ինչի՞ մասին էր այդ հատվածը, ի՞նչ հիշեցին, ի՞նչը մտածելու տեղիք տվեց, ի՞նչ հարցեր ծագեցին մտքում, ի՞նչ զգացումներ կամ տպավորություններ ունեցան, ինչի՞ն են համաձայն կամ ինչի՞ն համաձայն չեն և այլն:

Կրկնակի գրառումներով օրագիրն այսպիսի տեսք կունենա.

Ստեղծագործության հեղինակ – Նադեր Էբրահիմի
Վերնագիր - Ում նվիրեմ իմ փոքրիկ սիրտը

[4] Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան <<Մայրենի 4>>(Մեթոդական ուղեցույց), Երևան 2009թ.

Ի՞նչ է գրված	*Իմ արձագանքը*
Դատարկ սիրտը դատարկ ծաղկամանի է նման և ցավ կարող է պատճառել մարդուն:	*Դատարկ ծաղկամանն ինչու՞ է ցավ պատճառում:*
Մարդու սիրտը հյուրանոց չէ, որտեղ կարելի է կարճ ժամանակով հյուրընկալվել ու թողնել գնալ:	*Շատ գեղեցիկ պատկեր է, լավ համեմատություն:*
Թաղի ազնիվ մարդիկ, բարեկամներ, հարազատներ, ընկերներ, երեխաներին սիրող ուսուցիչներ:	*Ես բժիշկներին էլ տեղ կտայի:*
Հարուստ հորեղբայրը սրտի մեջ չէր տեղավորվում սնդուկների՝ հարստության պատճառով:	*Ոչ թե հարստությունն էր մեղավոր, այլ այն, որ հորեղբայրը եսասեր էր, բարեգործություն չէր անում,իր ունեցածով ուրիշներին չէր օգնում:*

Ուսուցիչը հանձնարարում է ստեղծագործությունը կարդալ դադարներով:

Երբ աշակերտներն ավարտում են աշխատանքը, կարող են կրկին ընթերցել ստեղծագրծությունը և նշումներ կատարել: Աշակերտների աշխատանքի ընթացքում ուսուցիչն էլ է աշխատում և իր սեփական գրառումներն անում: Այսպես աշակերտներն ավելի զգաստ և պատասխանատու են դառնում իրենց աշխատանքի նկատմամբ, մյուս կողմից էլ՝ ուսուցչի հետ հավասարության զգացողություն են ունենում: Ուսուցչի այս գործելակերպը ոգևորում է աշակերտներին և մեծապես նպաստում աշխատանքի հաջող կատարմանը: Ընթերցումն ու գրառումները միասին կարող են տևել տասնհինգ-քսան րոպե: Այնուհետև ուսուցիչն առաջարկում է մեկնաբանել գրառումները:

Պետք է սկսել ստեղծագործության սկզբից և հերթականությունը չխախտել:

Որևէ մեկնաբանություն լսելիս հարկավոր է ստուգիչ հարցեր տալ, ինչպես օրինակ՝ <<Ինչու՞ հենց այս հատվածը գրավեց քո ուշադրությունը>>, <<Ինչի՞ մասին մտածելու առիթ տվեց այս հատվածը>> և այլն: Եթե աջ սյունակում աշակերտը նշել է, որ տվյալ հատվածի, դրվագի, արտահայտության մեջ ինչ-որ բան անհասկանալի է իրեն, կամ որ ինքը դրանց վերաբերյալ հավելյալ տեղեկություններ, լրացուցիչ բացատրություններ կուզեր ստանալ, ուսուցիչը պիտի փորձի մյուս աշակերտների միջոցով համապատասխան բացատրություններ տալ, տեղեկություններ հաղորդել և այլն:

Զախ սյունակի յուրաքանչյուր գրառում կարդալիս հարկավոր է հարցնել, թե արդյոք մյուսները նշե՞լ են տվյալ հատվածը, միտքը, նախադասությունը: Եթե այո, ապա ուսուցիչն առաջարկում է, որ այդ հատվածին անդրադարձած բոլոր աշակերտները կարդան այն, ինչ գրել են դրա մասին: Ուշադրություն է դարձվում գրառումների նմանություններին և տարբերություններին, ծավալվում է քննարկում այդ ուղղությամբ: Աշակերտների կարդալուց հետո ուսուցիչը ներկայացնում է իր գրառումները: Ուսուցչի մասնակցությունը պետք է ոչ թե կաշկանդի, այլ ընդհակառակը՝ խրախուսի աշակերտներին, քանի որ ուսուցիչն աշխատանքի հավասար մասնակից է դառնում: Ուսուցիչը և աշակերտները չպետք է ամաչեն միմյանցից, այլ անկեղծ և անկաշկանդ լինեն:

Կարևոր դեր են կատարում ընդհանրական հարցերը: Ճիշտ է, քննարկումը բխում է աշակերտների անձնական մեկնաբանությունից, սակայն ընդհանրական հարցերն օգնում են տեքստն ընկալելու իբրև մեկ ամբողջություն և միաժամանակ մտածելու ուսուցչի առաջադրած հարցերի ուղղությամբ:

Հարցերը կարելի է այսպես ձևակերպել:

Հատվածը կարդալիս ի՞նչ հիշեցիր:

Ընթերցելիս ի՞նչ մտածեցիր:

Ի՞նչը գրավեց քո ուշադրությունը:

Ինչպիսի՞ տպավորություն ունեցար:

Ո՞րն է ստեղծագործության հիմնական ասելիքը:

Անպատասխան ի՞նչ հարցեր մնացին:

Դու ի՞նչ կփոխեիր այս ստեղծագործության մեջ:

Աշակերտներին այս հարցերից երկու-երեքը կարելի է առաջադրել՝ հաշվի առնելով ստեղծագործության բնույթը, ծավալը, դասարանի պատրաստականության աստիճանը և այլն: Նադեր Էբրահիմի <<Ում նվիրեմ իմ փոքրիկ սիրտը>> պատմվածքը երեխաների մեջ դաստիարակում է հոգատարություն, սեր ծնողների, հարազատների նկատմամբ, այն բոլոր բարի մարդկանց նկատմամբ, ովքեր մեծ տեղ ու նշանակություն ունեն մեր կյանքում: Երեխաներին հորդորում է սիրել մտերիմներին ու հարազատներին: Հարգել ուրիշներին, որպեսզի նրանք էլ իրենց հարգեն: Ուշադիր և հոգատար լինեն իրենց շրջապատող մարդկանց նկատմամբ, օգնեն նրանց, ինչով կարող են: Ուրիշների հետ վարվեն այնպես, ինչպես կուզեն, որ իրենց հետ վարվեն:

Կրկնակի գրառումներով օրագիրը կարելի է կիրառել մի շարք ստեղծագործություններ ուսուցանելու ժամանակ, ինչպես՝ Էդ դե Ամիչիսի <<Փոքրիկ հայրենասերը>>, Ն. Էբրահիմի <<Ում նվիրեմ իմ սիրտը>>, Ա. Պարսամյանի <<Հրաշք վրձինը>>, Ռ. Մարուխյանի <<Չորս խնձոր>>, Վ. Գրիգորյանի <<Հեքիաթ արցունքի ու ծիծաղի մասին>>, Զ. Ղալափյանի <<Ծաղկուն պարտեզ>>, Մ. Խերանյանի <<Սասունցի Դավիթը>>:

2.2. Մայրենի լեզվին, մորը և հայրենիքին նվիրված ստեղծագործությունների ուսուցումը

Մայրենիի դասագրքերի միջոցով աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, հասկանալ կարդացածը և վերարտադրել, այլև տեղեկություններ են ձեռք բերում Հայաստանի, նրա քաղաքների, բնության, հայ ժողովրդի պատմության, սովորությունների, մշակույթի մասին, ինչպես նաև բազմաթիվ աշխարհաճանաչողական և լեզվական գիտելիքներ, անձնային բարձրարժեք որակներ, զարգանում է նրանց գրական, գեղագիտական ճաշակը, ձևավորում է լեզվամտածողությունը: Մայրենի լեզվի ուսուցման գործընթացը մասնավորապես կարևորվում է լեզվամտածողության ձևավորման իմաստով: Այն

ստեղծագործությունները, որոնք ուսումնասիրվում են հայոց լեզվի դասերին, այնպես պետք է ուսուցանել, որ դրանք երեխաներին ոչ միայն մայրենի լեզվով կարդալ և պատմել սովորեցնեն, այլև մշակեն ընթերցած ստեղծագործությունը հասկանալու, նրա ենթաշերտերի մեջ թափանցելու, հերոսների գործողությունները վերլուծելու, լավը վատից, չարը բարուց տարբերելու, դրանց մասին դատողություններ անելու, պարզ վերլուծություններ կատարելու կարողություններ:

Ուսուցման անհատականացման սկզբունքը բխում է աշակերտների անհատական առանձնահատկություններից, ինչպես նաև նրանց տարամակարդակ մտավոր հնարավորությունների և ունեցած գիտելիքների և ունակությունների հաշվառման կարևորությունից:

Անհատական և տարբերակված մոտեցման իրականացումը միանգամայն հնարավոր է թե՛ համամարդկային, թե՛ խմբային, թե՛ զույգերով աշխատանքի միջոցով: Կարևոր է գիտակցել, որ հայոց լեզվի դասի ժամանակ յուրաքանչյուր երեխայի պիտի տրվի կարդալու, գրելու, պատասխանելու, հարցազրույցներին ակտիվորեն մասնակցելու լեզվական տարաբնույթ վարժություններ կատարելու հնարավորություն: Այս աշխատանքների իրականացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի նստել ամբողջ դասարանի և յուրաքանչյուր երեխայի հնարավորությունների հետ՝ յուրաքանչյուրին աշխատեցնելով այնքան, որքան նա կարող է, յուրաքանչյուրից ակնակալելով այն, ինչ նա յուրացրել է: Այսպիսի աշխատանքային մթնոլորտ է ստեղծում մասնավորապես *աշակերտակենտրոն ուսուցմանը* նպաստող փոքր խմբերով, զույգերով աշխատանքը, որի ժամանակ երեխաները ոչ միայն լսում են մեկը մյուսին, պատմում են, բացատրում իրար, այլև համագործակցում են, օգնում են իրար, հանգամանք, որով պայմանավորված է մտահաղորդակցական ունակությունների զգացումը, այլև անձնային կարևոր որակների ձևավորումը:[5]

Մայրենի լեզվի դասագրքերում հիմնականում զետեղված են գեղարվեստական ստեղծագործություններ, որոնց ուսումնասիրման գործընթացն ունի մի քանի առանձնահատկություն: Մորը, մայրական սիրուն նվիրված բանաստեղծությունների ուսումնասիրման հիմնական նպատակն է աշակերտների մեջ դաստիարակել մոր

3. [5] Ջ. Գյուլամիրյան <<Հայոց լեզվի մեթոդիկա>>, Երևան 2006թ.

նկատմամբ անմանցորդ նվիրումի և երախտագիտության զգացում: Մարդու կյանքում թանկ ու հարազատ շատ բաներ կան, բայց ոչինչ և ոչ ոք չի կարող համեմատվել այն էակի հետ, որ կոչվում է մայր: Ոչ ոք չի կարող ասել, թե ինչու է սիրում իր մայրիկին: Այդ հարցը պատասխան չունի, քանի որ մորը հնարավոր չէ չսիրել, քանի որ մոր նկատմամբ սերը ծնվում է կյանք ստանալու պահին: Մայրն աշխարհի ամենաչքնաղ արարածն է, գեղեցիկ են բոլոր մայրերը, բարի են բոլոր մայրերը, այնուամենայնիվ, յուրաքանչյուրի համար իր մայրն է ամենագեղեցիկը, ամենաբարին… Համարյա բոլոր գրողները, հատկապես բանաստեղծները, իրենց ստեղծագործություններում կերտել են մոր կերպարը: Բայց այդ թեման երբեք չի սպառվում. գալիս են նորերը և նոր բառերով, նոր պատկերներով են գրում մոր մասին:

2.3. Հայ ժողովրդի ազգային խառնվածքի և համամարդկային գծերի բացահայտումը՝ որպես աշակերտների հոգեկերտվածքի ձևավորման միջոց

Հայ ժողովուրդն իր պատմական զարգացման ընթացքում ստեղծել է ժողովրդական շատ ու շատ ստեղծագործություններ՝ աշխատանքային ու ծխական երգեր, հեքիաթներ, առասպելներ և այլն: Ժողովրդական ամենամեծ ստեղծագործությունը, որի մեջ դրսևորվում է նրա ազատատենչ ոգին, պայքարը անկախության և ազատության համար, հայրենասիրությունը, ազնվությունը, աշխատասիրությունը, ուղղամտությունն ու խոհեմությունը պատկերող դյուցազներգությունն է: Հայ ժողովրդական էպոսը կոչվում է <<Սասնա ծռեր>> կամ <<Սասունցի Դավիթ>>: Էպսում պատկերված է հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ, որը խորհրդանշում է առհասարակ տարբեր ժամանակներում տարբեր թշնամիների դեմ մեր ժողովրդի մղած հերոսական պայքարը:

Հայ ժողովրդի ոգու և նրա ձգտումների խորհուրդը պերճախոս կերպով քանդակված է նրա <<Սասունցի Դավիթ>> էպոսի մեջ… Սասմա էպոսը մեր պատմության, գրականության փիլիսոփայությունն է…

…Հայ ժողովուրդը դարերով նվիրագործված իր տենչանքը ազատ, անկախ գոյության՝ անձնավորեց իր հոյակապ դյուցազնի՝ Սասունցի Դավթի մեջ… դյուցազն Դավթի մեջ լրիվ կերպով շոշափվում է հայ ժողովուրդը: Դավիթը *հայրենասեր է, ժողովրդասեր,*

ռամիկի և աշխատավորների պաշտպան, անձնուրաց է, քաջ, մարդասեր և խաղաղասեր:

Ահա այս ամենը հաշվի առնելով, որպես դասի օրինակելի պլան և որպես երեխայի արժեքային համակարգի ձևավորման կարևորագույն նյութերից մեկը, որոնք ուսուցվում են կրտսեր դպրոցում, ընտրել եմ <<Սասունցի Դավիթ>>-ը: Այն ուսումնասիրել եմ 2-4 դասարաննեի դասագրքերում: Դավթի կերպարի մեջ բացահայտվում են հայ ժողովրդի ազգային բնավորության գծերը(ազնվություն, մարդամոտություն, ակնածանք, հարգանք մեծերի նկատմամբ, սեր հայրենիքի նկատմամբ և հանուն նրա գործած սխրանքներ, քաջություն): Այս նյութերն ուսումնասիրելուց հետո երեխաներն իրենց վերաբերմունքն են արտահայտում թշնամու նկատմամբ: Գովեստի խոսքեր են ասում Դավթի հասցեին: Քննարկում են նրա քայլերը, ասում են, թե ում հետ էր կռվում և ինչու: Դավիթը դեմ էր բռնությանը, անազնվությանը: Ի՞նչն են գնահատում աշակերտները Դավթի կերպարում: Ինչպե՞ս կվարվեին իրենք նման հանգամանքներում և այլն: Երեխաները նաև նամակ են գրում Դավթին:

Ստորև ներկայացված է <<Սասունցի Դավիթ>> թեմայի թեմատիկ ընդգրկվածությունը և ուսուցումը ըստ տարբեր դասարանների:

Մայրենի 2(Ա.Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան), <<Մանուկ Դավիթը>>

Այս դասագրքում ներկայացված Դավթի մանկությունն ու նրա նախրապանությունը:

Մայրենի 4(Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան),<<Սասունցի Դավիթ>>

Այս դասագրքում ներկայացված է Դավթի կռիվը Մըսրա զորքի դեմ և Դավթի ու արաբ ծերունու հանդիպումը:

Արդեն 4-րդ դասարանում, երբ երեխաները քիչ թե շատ ծանոթ են էպոսի բովանդակությանը, ամփոփիչ զրույցը կարելի է կազմակերպել հետևյալ կաղապարով.

Դուք արդեն գիտեք, որ <<Սասունցի Դավիթ>> էպոսը ժողովրդի ստեղծագործությունն է, որ այն կազմավորվել է միջին դարերում և սերնդեսերունդ

բանավոր պատմվելով՝ հասել է մինչև մեր օրերը: Այժմ դուք ծանոթացաք մեկ այլ ստեղծագործության՝ դարձյալ <<Սասունցի Դավիթ>> վերնագրով:

Պատասխանեք հետևյալ հարցերին.

- Ի՞նչ ստեղծագործություն է սա, ո՞ր բնագրի մի հատվածն է <<Սասունցի Դավթի և Մըսրա Մելիքի մենամարտը>>:
- Ո՞վ է այս ստեղծագործության հեղինակը:
- Ի՞նչ տարբերություն կա ձեր անցած երկու հատվածների միջև. նրանցից ո՞րն է ժողովրդական ստեղծագործություն, ո՞րն է գրական մշակում:

Ի՞նչ գաղափարներ է արտահայտում <<Սասունցի Դավթի և Մըսրա Մելիքի մենամարտը>> հատվածը. ի՞նչ են սովորեցնում պատերազմի պատկերները, Դավթի և արաբ ծերունու խոսքերը:

Պատկերացրեք, որ ժամանակի մեքենան ձեզ տանում է դեպի անցյալը: Կանգառներից մեկում պատուհանից երևում է փոշու ամպով ծածկված մի դաշտ: Լսվում են մարդկանց տնքոցներ. գետինը ծածկված է վիրավորների և մեռած մարդկանց անսահման քանակությամբ: Ամեն ինչից երևում է, որ կռիվը նոր է ավարտվել: Եվ հանկարծ փոշու ամպի միջից երևում է մի հսկա, որի ոտքերի մոտ ընկած է մեկ ուրիշ հսկա: Դու ճանաչում ես նրանց. առաջինը Սասունցի Դավիթն է, երկրորդը՝ ծանր վիրավոր Մըսրա Մելիքը: Դու իջնում ես մեքենայից, մոտենում ես նրանց: Ի՞նչ հարցեր կտաս Սասունցի Դավթին և Մըսրա Մելիքին: Բացի հարցերից ի՞նչ կասես նրանց:

Սա շատ հետաքրքիր աշխատանք է, որը երեխաներին մեծ բավականություն կպարգևի, և նրանք հետաքրքրությամբ ու սիրով կկատարեն այն:

Երեխաներին կարելի է նաև հանձնարարել գրել շարադրություն տրված վերնագրերից որևէ մեկով.

- Սասունցի Դավիթն իմ պատկերացմամբ
- Ես սիրում եմ Դավթին, որովհետև…
- Ես ատում եմ Մըսրա Մելիքին, որովհետև…
- Եթե ես ունենայի այս հսկաների ուժը…
- <<Սասունցի Դավթի>> արձանը Երևանում:
-

Եզրակացություն

Այսպիսով, ղեկավարվելով մայրենի լեզվի ծրագրով և նյութ ունենալով ընթերցարանների գործնական նյութերը՝ ուսուցիչը բացատրական ընթերցանության միջոցով աշակերտներին զինում է շրջապատի բնական ու հասարակական երևույթների ճիշտ ճանաչողությամբ, ռեալ ու բազմակողմանի տեղեկություններ է տալիս կյանքի մասին, օժտում է մատերիալահիստական աշխարհաճանաչողությամբ: Գրական ստեղծագործությաունների ուսուցումն աշակերտների մեջ մշակում է գեղարվեստական ճաշակ, սեր դեպի գեղեցիկն ու լավը, մշակում է ազնիվ ու բարի հակումներ, վեհ ու խորապես մարդկային զգացմունքներ: Թե՛ մեկ, և թե՛ մյուս տիպի նյութերի միջոցով երեխաների մեջ մշակում է լեզվական բարձր կուլտուրա, որպեսզի նրանք կարողանան իրենց տեսածն ու լսածը, իրենց խոհերն ու ապրումները պարզ, անպաճույճ, հստակ, մաքուր ու գեղեցիկ հայերենով տրամաբանված ձևով արտահայտել:

Ընթերցանության նյութերի այս նպատակասլացության շնորհիվ էլ հենց ուսուցիչը հնարավորություն ունի այդ նյութերի մշակման ժամանակ երեխաների մեջ որոշակի ապրումներ ու հուզական պահեր ստեղծել և դրանով իսկ նվիրվածության ջերմ զգացմունք առաջացնել դեպի հայրենիքը, ատելության զգացմունք՝ դեպի մեր երկրի ու ժողովրդի թշնամիները, հիացմունքի զգացմունք՝ դեպի նշանավոր մարդկանց կյանքն ու գործը: Գրական նյութերը սերմանում են հպարտության զգացում, խորը հումանիզմ ու լավատեսություն, ժողովրդին ու հայրենիքին օգտակար լինելու ցանկություն և այլն: Ընթերցանության դասերի երեխաների մեջ մշակվում ու դաստիարակվում են վարքի այնպիսի կարևոր հատկանիշներ, ինչպիսիք են՝ հաստատակամությունը, կարգապահությունը, ճշմարտասիրությունն ու ճշտապահությունը, կամքի ուժն ու համարձակությունը, հակումը դեպի լավն ու բարին, սերը՝ դեպի գեղեցիկն ու ազնիվը և այլն:

Այս բոլոր իրականացնելու համար ուսուցչին օգնության է գալիս մայրենի լեզուն՝ <<այդ զարմանալի մանակավարժը>>, որ ի վիճակի է ամեն ինչ այնքան հեշտ ու այնքան խոր կերպով սովորեցնելու, օգնության են գալիս գեղարվեստական գեղեցիկ

ստեղծագործությաուններն իրենց դրական կերպարներով ու գեղարվեստական խոսքի ներգործությամբ:

- Ստեղծագործությունը ուսումնասիրելիս անհրաժեշտ է երեխաներին օգնել՝ **թափանցելու նրա հուզական գունապնակի մեջ**՝ կարևորելով ստեղծագործության զգացմունքային ազդեցությունը, նպաստելով արժեքային համակարգի ձևավորմանը: Ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացմունքային ապրումները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի՝ ինքնաճանաչման, ինքնաարտահայտման, ինքնագնահատման ոլորտներին, այնպես էլ մեծ և փոքր խմբերով ուսումնական-ստեղծագործական գործունեության ձևերին: Փորձը ցույց է տալիս, որ ոչինչ երեխաներին այնպես չի համախմբում, որքան մեկ նպատակի շուրջ զգացմունքային ապրումներով միվորվելը: Այս նպատակով պիտի դասարանում ստեղծել այնպիսի հոգեբանական մթնոլորտ, զգացմունքային տրամադրվածություն, որ երեխաները ոչ միայն անհամբեր սպասեն նյութի ընթերցմանը, այլև ակտիվորեն, ազատ ու անկաշկանդ մասնակցեն ընթերցածի շուրջ իրականացվող քննարկմանը: Այսպիսի մթնոլորտ ապահովում է մասնավորապես նյութի ընթերցումից առաջ ուսուցչի վարած նախապատրաստական զրույցը, որը բացատրական ընթերցանության մեթոդի կարևոր բաղադրամասերից է:
- Դասարանում փոքր կամ մեծ խմբերով աշխատելիս **միջանձնային առողջ հարաբերությունների առկայության դեպքում** գեղարվեստական ստեղծագործությունների՝ անձի զարգացման և արժեքային համակարգի ձևավորման գործում ունեցած դերը դառնում է խմբային գործունեության հիմքը հանդիսացող զգացմունքային ապրումների ապահովման պայման:
- Կարևորելու գեղարվեստական ստեղծագործությունների **ճանաչողական արժեքը**՝ կրտսեր դպրոցականների մտահորիզոնի զարգացման, հետաքրքրությունների բավարարման, աշխարհայացքի ձևավորման գործում:
- Գիտակցել գեղարվեստական գրականության դերը **անձի զարգացման**, նրա **արժեքային համակարգի ձևավորման գործում**: Հանրակրթության առաջին օղակը անձի զարգացման դպրոցն է: Այստեղ ձևավորվում և զարգանում են կրտսեր

դպրոցականների միտքը, զգացմունքները, հայացքները և ազգային ու համամարդկային այլ որակներ: Այս իմաստով գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների, ձգտումների, արժեքների ճիշտ վերլուծությունը կրտսեր դպրոցականների մեջ որոշակի բարոյական արժեքների ձևավորման, տրամաբանական հետևությունների հանգեցնելու անփոխարինելի միջոց է:

Ավարտական աշխատանքի մեջ գործնական օրինակներով հանգել ենք այն եզրակացության, որ ժամանակակից մեթոդական եղանակների և հնարների կիրառությամբ, աշակերտակենտրոն ուսուցման ճանապարհով արդյունավետ է դառնում և՛ բարոյական բարձր արժեքների, և՛ ազգային բնավորության գծերի, և՛ ազգային ու համամարդկային արժեքների ձևավորման գործընթացը:

Եվ կարողությունների ու հմտությունների ամբողջությունը սովորողին հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել ստացված գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Տեր-Գրիգորյան <<Գեղարվեստական ստեղծագործությունների ավանդումը տարրական դասարաններում>>, Երևան 1971թ.:
2. Ա. Տեր-Գրիգորյան <<Ընթերցանության մեթոդիկա>>, Երևան 1978թ.:
3. Ա. Տեր-Գրիգորյան <<Հայոց լեզվի մեթոդիկա>>, Երևան 1980թ.:
4. Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան <<Մայրենի 3>>(Դպրոցական դասագիրք), Երևան 2009թ.:
5. Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան <<Մայրենի 1>>(Ուսուցչի ձեռնարկ), Երևան 2007թ.:
6. Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան <<Մայրենի 2-4>>(Ուսուցչի ձեռնարկ), Երևան 2007թ.:
7. Գ. Մկրտչյան, Ն. Տողանյան <<Մայրենի 5-6>>(Մեթոդական ուղեցույց), Երևան 2009թ:
8. Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան <<Մայրենի 3>>(Դպրոցական դասագիրք), Երևան 2008թ.:
9. Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան <<Մայրենի 4>>(Դպրոցական դասագիրք), Երևան 2009թ.:
10. Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան <<Մայրենի 3>>(Մեթոդական ուղեցույց), Երևան 2008թ.:
11. Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան <<Մայրենի 4>>(Մեթոդական ուղեցույց), Երևան 2009թ.:
12. Ջ. Գրիգորյան <<Հայ գրականություն>>(Ուսումնական ձեռնարկ), Երևան 2009թ.:
13. <<Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր>>, Երևան 2007թ.:
14. <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես 1-2.2008:
15. <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես 5-6.2008:
16. <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես 3.2010:
17. <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես 1.2011:
18. Ջ. Գյուլամիրյան <<Հայոց լեզվի մեթոդիկա>>, Երևան 2006թ.: